

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Մասնաւոր մարդու համար, մի մարդու, որ ցանկանում է ճանաչել իւր հալոյնակիցներին և նրանց կեանքի զանազան երեւոյթները պարզել իւր և ուրիշների համար, դործը վերին աստիճանի դժուար է։ Որպէս զի տալ օր. Շուշու գաւառի տնտեսական դրութեան լիակատար նկարագիրը, բաւական չէ շրջել ալդ գաւառում, իբրև տուրիստ, որին ժողովուրդը ցանկութիւն անգամ չունի անսխալ տեղեկութիւններ տալու։ Սե ալդ որոշ չափով հասկանալի է. ծանր պալմանների մէջ ապրող գիւղացին կարծում է, թէ իւրաքանչիւր ճշմարիտ տեղեկութիւն, որ նա տալիս է, պիտի աւելացնի մի նոր հոգս նրա չարատանջ կեանքի մէջ, պիտի աւելացնի մի քանի ժամ էլ առանց աչն էլ լոգնեցնող աշխատանքի վրա։ Ի նկատի պէտք է ունենալ և՛ տուրիստի միանգամայն զարմացնող դերը գիւղերում, երբ նա առաջարկում է հարցեր գիւղացուն։ Յիշում եմ, երբ ես հարցնում էի սրանոցի տիրոջ՝ նրա ալդ սեփականութեան մասին, նա աչնքան թերահաւատութեամբ էր նայում ինձ, որ ալդ բոպէին իսկապէս կարելի էր խղճալ նրան...

Բալց ալդ բոլորը դեռ կարելի է լրացնել։ Աչն՝ ինչ որ պատմում է գիւղացին իւր և իւր երկրի վիճակի մասին, դեռ բաւական չէ՝ ալդ երկրի տնտեսական դրութեան լիակատար պատկերը ներկայացնելու համար։ Պէտք է ունենալ թուեր։ Միակ աղբիւրը, որից ես կարողացել եմ հանել թուեր, ալդ «Кавказский календарь»-ի մի քանի տարուաչ հատորներն էին։ Բալց որքան կարելի է հաւատալ ալդ հրատարակութեան, քանի որ իւրաքանչիւր քաղաքիւսում պատահում են նորանոր կուրեօղներ։ Անկարելի է ալդտեղից արտագրել թուեր՝ անհոգ մնալով նրանց ճշտութեան նկատմամբ։ Կարելի է երևակայել ուսումնասիրողի դրութիւնը, երբ նա հանում է «Կալկադսկի կալենդար»-ից մի տարուաչ հացահատիկների ընդհանուր քանակութիւնը և լետոյ համեմատելով ալդ դաւառապիտի տուած՝ նույն տարուաչ մասին տեղեկութիւնների հետ, տեսնում է, որ մէկի թուերը չեն համապատասխանում միւսին, ալ մէկը միւսից տարբերում է 70,000-ով։

Իմ աչս աշխատութեան մէջ պակասում են թուեր շատ հար-

ցերի մասին: Այսպէս, ես չեմ կարող թուերով ապացուցանել հողատիրութեան դրութիւնը մեր գաւառում: Եթէ դրա մասին ունենալի ստույգ տեղեկութիւններ, առանց վարանելու պիտի ասէի ալն, ինչ որ տեսնում է ճանապարհորդը գաւառում, կարելի է կարծել թէ աշխատութեան մէջ բերուած մի քանի թուերը ճիշտ են բոլոր քնակիչների համար: Եթէ ալդ ալդպէս լինէր՝ ալն ժամանակ կասկած չէր մնալ, որ Շուշու գաւառի գիւղացին ապրում է բարօրութեան մէջ: Եթէ իւրաքանչիւր հողի ունենար 4 չետվերտ հացահատիկ, ինչպէս ալդ կը տեսնի ընթերցողը իմ լողուածում, եթէ իւրաքանչիւր տուն ունենար ձի, ոչխար, եղ ու կով, ալն ժամանակ նա կունենար առնուազը բարեկեաց երկրագործի վիճակը: Բայց միթէ ալդ ճիշտ է և իրականութեան մէջ... Գաւառում կան ծխեր, որոնք ունին մի կամ երկու գետնատին հող, մինչդեռ իւրաքանչիւր ընտանիքի անդամների թիւը 6—10 է: Զօրեղ գիւղացին ունի աւելի հող քան նա, որ ճնշուած է, նա, որ հասարակութեան մէջ գիրք չունի, Հացի սակաւութիւնը բերում է պարտքեր, որոնք աներևակալելի տոկոսներ են բերում պարտատէրերին: Ամենին ստախօսութիւն չպէտք է համարել, եթէ գիւղացին լալտնում է 10 րուբլու 100 դառնալը կարճ ժամանակուայ ընթացքում: Յետո՛ւ կան գիւղերում մարդիկ, որոնք պարապում են բացառապէս վաշխառութեամբ: Դրանք չրջում են գիւղերը ամբողջ տարին և ամենալն ջանք թափում են իրենց զործը օգտաւէտ դարձնել հարկերի հաւաքման ժամանակ: Մի գիւղացի, որին մտրակով ստիպում են շաքթուալ ընթացքում, որտեղից էլ լինի փող ճարել և վճարել արքունի հարկը, անկասկած թնթեւութիւն է զգում, երբ տեսնում է, որ վաշխառուն պատրաստ է անհրաժեշտ գումարը տալու նրան: Բայց ինչքան թանկ է նստում ալդ թեթեւութիւնը գիւղացուն:

Ենթադրենք գիւղացին վերցրել է պարտք, կալից լետո՛ւ նա տալիս է տոկոսը ցորենով, որովհետև փող չունի: Յորենը զնահատում է աւելի ցած քան որ կարող էր վաճառուել: Դրամագլուխը հետզհետէ մեծանում է, չնալելով որ գիւղացին վճարում է տոկոսը: Անպաշտպան գիւղացին գանգատուել ալդ անիրաւութեան դէմ չէ կարող, որովհետև գիւղական դատարանը պաշտպան է վաշխառուին. տանուտէրը լաճախ լնքը վաշխառու, իսկ բարձր գիտածներից մատչելի չեն ժողովրդին... Բացի դրանից՝ գիւղացին ունի տալու «չափար-փուլի», «գեազմա-փուլի», «դաշի-փուլի» և պիտի տալ փող զանազան ուստիկանների և ալ պաշտօնեաների հիւրընկալելու համար: Վերջապէս նա ունի ընտանիքի ծախքեր: Ալն, ինչ-որ կարելի էր ասել գիւղական ժողովրդի ընտանեկան ծախքերի մասին 10 տարի առաջ, ալժմ չէ կարելի, որովհետև հետզհետէ աւելանում

են գիւղացու պահանջները: Այսպէս, եթէ տաս տարի առաջ գիւղացու խմելիքը միայն ցուրտ ջուրն էր, ալժամ նա գործ է ածում թէյ, եթէ մինչև ալժամ նա գաղափար չուներ թանգագին խմիչքների մասին, ալժամ ունևոր դասակարգի հարսանիքում նա տեսնում է «կոնեակ»: Նոյն տարբերութիւնը և՛ զգեստների, ուտելիքների վերաբերմամբ:

Տնտեսական պայմանների ծանրութիւնը կարելի է պարզել մասամբ և՛ գործարանական բանուորների երևութով:

Մետաքսի գործարաններում աշխատում են 8 տարեկան աղջիկներ: Անկասկած ընտանիքը չէր թողնի իւր երեխային դեղնել, գունատուել և հիւանդանալ գործարանական կեղտոտ մթնոլորտի մէջ, եթէ նա ապահովուած լինէր: Այդ նշանակում է, որ ընտանիքի անդամներից իւրաքանչիւրը հարկադրուած է աշխատել՝ պահելու իւր գլուխը: Եթէ գործարանը տար նշանաւոր օրավարձ, ապա կարելի էր ասել, թէ գիւղացուն գրաւում է ալդ, մանաւանդ որ ժողովրդի մէջ փողը բացակայում է: Բայց չէ՞ որ երեխան ստանում է 7—10 կոպ. օրավարձ: Գործարաններում աշխատում են նոյնպէս հասակաւոր կանաչք: Անշուշտ բարոյականութեան առաքեալները, տեսնելով հաշկնոջ գործարանի պատերի մէջ՝ ծախելիս իւր աշխատանքը և իրեն, պիտի պոռային ազգի կորստի մասին: Բայց հաշկ «բարձրակոչ» բարոյականութիւնն անգամ չը դիմացաւ գոյութեան պաշտպանութեան հարցում, — իրականութիւնն ալդպէս է:

Գործարանների աճումը նոյն իսկ ցոյց է տալիս երկրի բնակիչների տրամադրութիւնը: Մի գիւղ, որ ունի փող՝ բացի բնական հարստութիւնից, ամենևին թույլ չի տալ իւր որդիներին գործարանում աշխատելու: Այդ դիպուածում գործարանատէրը կամ պիտի իւր հետ բանուորներ բերի, որը շատ թանգ կը նստի նրան, կամ գործարան չբանալ ալդ գիւղում: Ընդհակառակը մենք տեսնում ենք, որ նոյն իսկ կան ձեռքեր, որոնք կ'առաջարկէին իրենց աշխատանքը, եթէ նորանոր գործարաններ բացուէին: Մի փաստ էլ: Այն գիւղերը, որոնք ունին մետաքսի գործարան՝ հարկերի հաւաքման ժամանակ դժուարութիւն չեն զգում — փող ունին: Այստեղից էլ ալն եզրակացութիւնը կարելի է անել, թէ գործարան ունեցող գիւղի ծխերից մեծ մասը տալիս է բանուորներ...

Բացի վերը լիշած «Кавказскій календарь»-ներից, ևս ունեցել եմ 1895 թուի՝ գաւառապետի տարեկան հաշիւը: Կետոյ, արհեստաւորների և բանուորների մասին ինձ տեղեկութիւններ տուել է պ. Լ. Աթաբէգեան:

Ա) ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

I. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ա) Հ ա ց ա հ ա տ ի կ ն ե ր .—Երկրագործութիւնը Շուշու գաւառում ժողովրդի ամենակարեւոր պարապմունքն է։ Գաւառի դաշտալիճն և լեռնալիճն մասերում հողը մշակւում է արօրով (ալաթ), իսկ գութանը, որը պահանջում է աւելի մեծ թւով բանւոր և անասուն, գրեթէ վերացուած է։ Եթէ չհաշուենք մի քանի ունևոր գիւղացիներին, գաւառում ժողովուրդը երկրագործական եւրոպական տեսակի գործիներ չունի։ Տիրապետող սակաւահողութիւնը չի ստիպում գիւղացիներին ունենալ կատարելագործուած մեքենաներ, որովհետեւ ներքաշ չունին փող, գաւառում չկա՞յ համալսական վարկ և ժողովուրդը չունի տեխնիկական գիտութիւններ։ Հա՛ երկրագործը բոլորովին չէ պարարտացնում հողը. աղբը նա գործադրում է, եթէ անտառներ չունի, իբրեւ վառելիք և սակաւ անգամ միա՛յն կտրում է ալգիները։ Միակ միջոցը, որով գիւղացին ուժեղացնում է հողը, ալգ արտերի անցան թողնելն է (запущение)։ Եթէ երկու-երեք տարի մի արտում ցանեն, երրորդ կամ չորրորդ տարին նոյն արտը չեն մշակում, ալ թողնում են մի կամ երկու տարի, որից կետոյ ցանում են կամ դարձեալ առաջուա՛յ արմտիքը կամ մի ալլը։ Հազիւ է պատահում, որ միևնոյն արտը երեք տարի իրար վրա՛յ ցանուի, սովորաբար երրորդ տարին ուրիշ հացահատիկ են սերմում։ Զրովի արտեր մեր երկրագործը չունի։

Սակաւահողութիւնը, բանւոր անասնի պակասութիւնը չաճախ ստիպում են գիւղացիներին կամ բոլորովին չպարապել երկրագործութեամբ, պանդխտել, կամ եթէ պարապում են, ոչ ալլապէս, քալց եթէ միանալով իրենց համագիւղացիների հետ, ընկերովի։ Ալապէս, եթէ գիւղացին չունի գոնէ մի լուծ եզ—minimum 2 զուգ—նա ընկերանում է իւր համագիւղացու հետ և երկուսը միասին մշակում են ունեցած հողերը, կամ՝ համագիւղացիները միանալով վերցնում են մի երրորդից հող և մշակ ու հօտաղ վարձելով, միասին տանում են գործը։ Ստացած բերքի չորրորդ մասը տրւում է նրան, որից վերցրուել է հողը, իսկ մնացածը կիսւում է։

Հացահատիկների ցանքով պարապող գիւղացիների թիւը հետզհետէ ընկնում է։ Թաղլարում ալգ աւելի աչքի է ընկնում, ո-

բովնեռն աղբոսդ բնակիչների մօտ $\frac{2}{3}$ միայն պարապում է աղբ ցանքով:

Ցանուող հացահատիկները հետևեալներն են. աշնանացան և գարնանացան ցորեն, գարի և կորեկ: Ձեռքի տակ ունեցած նիւթերից հանելով Շուշու գաւառին վերաբերեալ թուերը, երևում է, որ ստացուած հացահատիկների ընդհանուր քանակութիւնները հետևեալ ութ տարիներում եղել են.

Տարիներ		1886	1889	1890	1891	1892	1893	1894	1895
Գեականներ	Ստացուած է հացահատիկ գաւառում	424,566	149,146	147,745	257,417	386,750	481,358	508,230	620,700
	Մի հոգու վերայ գալիս է գաւառում	4,11	1,39	1,37	2,37	2,52	4,34	4,54	5,5

1886 թուին Շուշու գաւառի գիւղացին ունեցել է աւելի մեծ քանակութեամբ հացահատիկներ, քան աղբ հարկատու էր նրան՝ կերակրուելու և սերմահատիկ պահելու համար: Գալիս է 1889 թուականը, երբ գիւղացին չուէի հացի անհրաժեշտ քանակութիւնը. 90 թուին նոյնպէս. նոյնը կարելի է ասել 91 և 92 թուերի մասին, եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ գիւղացին՝ բացի անհրաժեշտ քանակութիւնից, պիտի շատ աւելի ունենար, որպէս զի կարողանար ծածկել նախորդ տարիների մնացորդը: Չմոռանա՞նք, որ 1879, 80 և 81 թուականներն էլ գիւղացին անց է կացրել զըժուարութեամբ և անկասկած պարտքերի տակ է մնացել: Գիւղերում շատերից կարելի է լսել սովի տարու պարտքերի մասին: Այսպէս ուրեմն 89 թուի ցանքի անբերրիութիւնը և նրա հետեանքները մասամբ մոռացւում են միայն 93-ին, որից սկսած մինչև 95 թիւը գիւղացին արդէն բաւական հաց ունի, որը սակայն չէ տալիս այն օգուտը, ինչ որ սպասում էր նա, որովհետև 94 թուից հացի գինը նկատելի կերպով ընկնում է:

Յիշելու է և այն հանգամանքը, որ գաւառը՝ գրեթէ միայն

տալիս է քաղաքին հաց, իրաւ, եթէ Զիրբալէլի կամ Զէվանշիրի գաւառներէից հացահատիկ բերէին Շուշու շուկաները, անկասկած պիտի չունենային ալն օգտաւը, ինչ որ ունենում է մեր գաւառի գիւղացիքն: Այդ բաւական պարզ է, որովհետեւ ճանապարհների հեռաւորութիւնը, ժամանակի և աշխատանքի վատնումը Զիրբալէլի կամ Զէվանշիրի գաւառի գիւղացիների համար աւելի մեծ է քան Շուշու գաւառի, մինչդեռ քաղաքի շուկաներում հացի տիրապետող գինը մնում է՝ գաւառի ամենամօտիկ և ամենահեռու, ամենալաւ և ամենալատ հացերի գները միջինը:

Աղաչէս ուրեմն Զիրբ. և Զէվ. գաւառները, եթէ վաճառում էլ են հաց Շուշու շուկաներում, ալն էլ աննշան քանակութեամբ: Եթէ աղաչէս է, նշանակում է մեր գաւառի գիւղացին իւր հացի մի մասը տալիս է քաղաքին: Յետոյ՝ վերը բերած աղիւսակի թուերի մէջ մտնում է և կարտօֆիլի քանակութիւնը, որը, սակայն, գիւղացին չէ գործադրում, իբրև հաց: Իսկ գարին բացառիկ դիպուածներում միայն հացի տեղ է գործադրում:

Որպէս զի ցոյց տամ առանձին առանձին ցանուող հացահատիկները և նրանց քանակութիւնները, մէկից ստացածը և մի հոգու վրալ եկող հացի քանակութիւնը միւսն գաւառում, դնում եմ ներքեւ երկրորդ աղիւսակը: Այդ չորս տարուց ընթերցողը կարող է տեսնել, որ հացահատիկների մէջ գերադաս տեղ բռնում է աշնանացան ցորենը, որից չետոյ գալիս է գարին և ապա կորեկը: Այդ դասաւորութիւնը բնորոշ է գաւառի համար ոչ միայն ալը մի քանի տարիների վերաբերմամբ, այլ և ընդհանրապէս:

Տարիներ	Յ Ո Ր Ե Ն								Գ Ա Ր Ի				Կ Ո Ր Ե Կ				Գաւառի բնակիչների մատուցւած քանակը
	Աշխատեցան			Գաւառացիներ													
	Ցանուած է	Ստացուած է	Մէկից ատ.	Ցանուած է	Ստացուած է	Մէկից	Մի հոգու վրայ զաւրթ է	Ցանուած է	Ստացուած է	Մէկից	Մի հոգու վրայ զաւրթ է	Ստացուած է	Ցանուած է	Մէկից	Մի հոգու վրայ զաւրթ է		
1886	58,419	292,905	5,0 ^{*)}	5,509	23,060	4,18	3,06	17,696	95,450	5,5	0,92	1,409	12,681	9,0	0,12	103,185	
1889	35,097	81,208	2,3	2,180	3,770	1,7	0,79	20,458	51,910	2,5	0,48	3,802	8,376	2,2	0,07	106,635	
1891	52,335	117,630	2,5	5,600	10,400	2,0	1,7	23,893	66,227	2,77	0,6	21,059	46,260	2,1	0,4	108,942	
1894	71,104	367,733	5,1	8,000	40,200	5,0	3,65	17,000	87,000	5,1	0,77	19,700	102,500	5,2	0,9	111,735	

^{*)} 58,419. 292,905. 5,0.

բ) Բամբակի Երկրագործական պարապմունքներից մէկն էլ, իբրեւ գիւղատնտեսական շահաւէտ մի ճիւղ՝ բամբակի մշակումն է։ Երկար ժամանակ չէ, որ բամբակը տարածուել է Շուշու գաւառում, հազիւ 10 տարի առաջ սկսուած լինի տնտեսութիւնը։ Ասկայն կարճ ժամանակի ընթացքում նա բաւական առաջ է գնացել։ Հաւանա-կանաբար բամբակի առաջադիմութիւնը բաւական սերտ կապ ունի ալն հանգամանքի հետ, որ տարուալ որոշ ժամանակին ժողովուրդը կարող է փող ունենալ բամբակի վաճառումից. իսկ ալը փողը շատ հարկաւոր է գիւղացուն,—պետական հարկերի և զանազան ծախ-քերի համար, որոնց նա չէ կարողանում ծածկել հացահատիկների ցանմամբ միայն։ Ներքե բերուած թուերը ցոյց են տալիս մաքուր բամբակի ալն քանակութիւնը, որ ստացուած է 1890, 1893, 94 և 95 թուերին։

1890 թ.	1893 թ.	1894 թ.	1895 թ.
2,138 փ.	4,3008 փ	4,474 փ.	4342 փ.

գ) Կարտոֆիլի Գանձակի նահանգում Շուշու գաւառը գրեթէ երկրորդ տեղն է, ուր մեծ քանակութեամբ կարտոֆիլ է ցանւում. Հետեւեալ վեց տարիներում ստացուած է կարտոֆիլ.

Տարիներ	1886	1889	1890	1891	1893	1894
Ցանուած է չետվերտ	94	530	4,950	3,070	16,830	43,753
Ստացուած է չետվերտ	470	3,882	18,450	16,850	85,570	73,597

Այս աղիւսակի թուերից պարզ երևում է, որ տասն տարի ա-ռաջ գաւառում կարտոֆիլ ցանւում էր աննշան քանակութեամբ, ալն ինչ ալժմ շատ մեծ ծաւալ է ստացել նա, և ցանւում է աւելի մեծ քանակութեամբ, քան օր. գարնանացան ցորենը։

Երկրագործական բանուորներ։ Սրանք պատկանում են գիւղական ժողովրդի ալն մասին, որը չունի երկրագործութեան համար անհրաժեշտ բանուոր անասունը, գործիները և ըստականալափ հող. բացի դրանից ունի զգալի պարտքեր։ Գիւղացիները ալը պալմաններից ստիպուած՝ կամ թողնում են իրենց ծննդավայրը աւելի երկար ժա-

մանակով, կամ պանդխտում են շրջակա թիւք գիւղերը՝ նրանց դաշտերում աշխատելու համար և կամ վերջապէս, եթէ հնարաւոր է, աշխատում են իրենց համագիւղացիներէ մօտ:

Հասակաւոր գիւղացին չէ ծառայում իւր համագիւղացուն ամբողջ տարով. քչերը միայն գարնան կամ աշնան աշխատում են ուրիշ արտերում և ստանում 7—10 բուբլ ամսավարձ:

Վերն ասացի, թէ աղքատ գիւղացին պանդխտում է շրջակայ թուրք գիւղերը աշխատութիւններ գտնելու համար,—դրանք հետեւեալներն են.

1) Վարող. Սա ցանում է մահմեդական գիւղացու արտերը, գործադրելով նրա անասունը, գործիները և սերմահատիկը: Գործատէրը տալիս է վարողին մի օգնական. վարողն էլ պարտաւորւում է մասնակցել հնձին և ստանում է բերքի $\frac{1}{5}$ -ը:

2) Հնձող. Ստանում է 20-ից 3-ը, ինչպէս ասում է գիւղացին, կամ 15%: Եթէ վարձը տրւում է փողով, հնձողն ստանում է իւրաքանչիւր փանջակի համար—5 խուրձ—20—25 կոպ. և կարող է հնձել օրը 4 փանջակ, minimum 2 փանջակ:

3) Հօտաղ. Սա տարիքով աւելի փոքր է քան վարողն ու հնձողը, որովհետեւ իւր գործը համեմատաբար աւելի քիչ ֆիզիքական ուժ և փորձառութիւն է պահանջում: 10—15 տարեկան զեղջուկը ծառայում է իւր պարտատիրոջ տանը. վարձւում է ամբողջ տարով. գործատէրը նշանակում է նրան 10—20 բուբլ տարեվարձ, ստանում է ուտելիքը, հագուստն ու տրեխը:

Հօտաղը վարձւում է և ամսով. այս դիպուածում նա ստանում է 4 բուբլ ամսավարձ, ուտելիքն ու տրեխը:

Կին քանուորներ. Հաջ կինը իւր գիւղից դուրս, ուրիշ գիւղի դաշտերում չէ աշխատում: Նրա զբաղմունքն, իբրեւ երկրագործ քանուորի, քաղհանն է: Քաղհան անող կինն ստանում է 15—20 կոպ. օրավարձ:

II. ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Այգեգործութիւնը գաւառում վաղուց տարածուած պարապմունք է ժողովրդի համար. իսկ վերջերս նա նկատելի կերպով ծաւալւում է և երկրագործութիւնից չեղով՝ առաջ է գալիս, իբրեւ ամենակարեւոր տնտեսութիւն: Չէ կարելի ասել, թէ գիւղացին սեփօգտուներ ունի ալգիներէից, որովհետեւ նա առ ալփմ մեծ քանակութեամբ օդի կամ գինի *) չէ արտահանում:

*) Այգեգործութիւնն այստեղ սահմանափակում է խաղողի և թթի այգիների մշակմամբ, որովհետեւ գաւառում պաղատու ծառերի ալգիները շատ չեն:

Ալեքսանդրովի մեծ գումարներ է տալիս հարուստ գործարանատէրերին, իսկ գիւղացին ինքը չաճախ ծախում է իւր ալգին կամ աւելի լաւ ասել, — որոշ վարձատրութիւն ստանալով գիշում է մի որևէ հարուստ գործարանատէրի՝ շահագործելու մի տարի և ալգպէս գրեթէ՝ իւրաքանչիւր տարի, խաղողի ալգիններից ստացած գինին հալ գիւղացին գործադրում է տանը և միայն քիչ քանակութեամբ վաճառ է հանում, Գաւառում իւր գինով չալտնի է Ղզղալան. վերջինիս տուած գինին վաճառւում է աւելի թանգ գնով, քան մնացած տեղերինը, Թուրք ազգաբնակութիւնը, խաղողի ալգինները կամ ծախում է՝ (իւրաքանչիւր տարի գրեթէ) շահագործելու հալերին կամ ինքը խաղողը վաճառում, իբրև պտուղ, խաղողից Թուրքերը պատրաստում են բէքմէզ:

Շուշու գաւառի հալ գիւղացու պատրաստ գինին շուտով թըթւում է, Այս վերջին երեսովը, բացի այն որ գիտութեան բացակայութեան հետեանք է, ունի մի ալ պատճառ էլ. դա գաւառի աշխարհագրական դիրքն է և սրա հետ կապուած վաղաժամ ցրտերն ու ձմեռը, որոնք ստիպում են գիւղացուն խաղողը քաշել — դեռ չհասած: Գաւառի դաշտալի մասերում և աւելի տաք տեղերում միայն քիչ ուշ է սկսւում խաղողաքաղը:

Գինին պատրաստւում է շատ հասարակ կերպով, խաղողը թափւում է հնձանի կամ «չրվիշի» մէջ և լետող աղամարդիկ մերկ ոտերով սկսում են կոխոտել խաղողը. դոպացած հեղուկը թափւում է հնձանից կարասների մէջ, — ալգքանով վերջանում է գինի պատրաստելու պրոցէսը:

Ներքև բերած վեց տարիներում գաւառում պատրաստւած է գինի — վեղորոներով հաշուած.

1884 թ.	85 թ.	90 թ.	93 թ.	94 թ.	95 թ.
95,406	40,000	130,000	180,000	186,000	17,900

1895 թուականին գաւառում ստացուած գինու քանակութեան փոքրութիւնը պիտի բացատրել այն հանգամանքով, որ ալգ տարի գաւառում տիրում էր խաղողի հիւանդութիւն, իսկ ընդհանրապէս թուերից երևում է, որ խաղողի ալգինները բաւական նշանաւոր տեղ են բռնում երկրում, 95 թուի տեղեկութիւններից երևում է, որ գաւառում խաղողի և թթի ալգինները բռնում են 7—8 հազար դեսետին հող, որից 5 հազարը միայն խաղողի, իսկ 2—3 հազար դեսետինը թթի ալգինները:

Թթի ալգինների շահագործութիւնը հալ գիւղացուն տալիս է որոշ չափով օղի և կերակրում է նրա շերամին, Թուրք ազգաբնա-

վրա թիւնը բոլորովին չէ պատրաստում օդի. թթի ալգինները նա նուրբում է շերամի որդերի կերակրելուն:

1895 թուին դաւառում պատրաստուած է 300,000 վեդրօ օդի. հաշուելով վեդրօի գինը 4 ռ. 50 կոպ., կը տեսնենք, որ ալգեգործութիւնը միայն օդի արտադրելով, տուել է 1,300,000 ռուբլի. եթէ աւելացնենք դրա վրայ գինին 17,900 վեդրօ՝ 23,270 ռուբլսւ արժողութեամբ, կ'ունենանք 1,323,270 ռուբլի: Այդ միլիօնը միայն ցոյց է տալիս դաւառի ալգեգործութեան ահազին նշանակութիւնը, իբրեւ գիւղատնտեսական նշանաւոր և օգտաւէտ ճիւղերից մէկի, բաց նա չէ ցոյց տալիս ժողովրդի տնտեսական զրութեան աստիճանը: Խոկապէս Շուշու դաւառը տալիս է արժողութիւններ, որոնց ամենամեծ մասը մնում է չօգտու հարուստ ալգետէրերի և զործարանատէրերի, իսկ ժողովուրդն ալ բոլորից վերցնում է ալնքան, որքան կարող է վերցնել անփող, արդիւնաբերութեան ձեռնարկութեան անկարող գիւղացիք: Արդիւնաբերուած օդին և գինին գրեթէ ամբողջապէս դուրս է եկել նրա ալգիններից և նրա աշխատանքի պըտուղն է, սակայն ալ բոլորից նա շահել է ալնքան, որ պիտի շահէր, եթէ տասնապատիկ պակաս աշխատած և քրտինք թափած լիներ, որովհետեւ նա ստիպուած է եղել անձեռնտու պալմաններով վաճառել իւր ալգինների պտուղը:

Ալգեգործական քանուորներ.

1. Դարիջի. սա ստանում է ամբողջ սէզօնի համար, որը տեսում է 6 կամ 7 շաբաթ, 10—15 ռուբլ. Հասակով զարիջիները լինում են 12—15 տարեկան:

2. Թուծ Թափողներ. ստանում են ամսական 20 ռուբլ, ամբողջ սէզօնի համար 30—35 ռուբլ: Սէզօնը տեսում է չունիսի 10-ից մինչև չունիսի վերջը:

3. Շալ բռնող կանայք ստանում են ամսական maximum 6 ռուբլ:

4. Խաղող քաղող կանայք ստանում են 10—20 կ. օրավարձ:

5. Խաղող կրող (տղամարդ) " " 30—40 " "

6. Խաղող կոխող " " 40—60 " "

Գարնան խաղողի ալգինների հողը փափկացնում են. դրա համար վարձուում են բանուորներ, որոնք բահում են ալգու հողը և ստանում են 30—50 կոպ. օրավարձ:

Օրավարձ բանուորն ստանում է գործատէրից՝ բացի դրամական վարձատրութիւնից՝ կերակուր:

III. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Անասնապահութիւնը հալ ազգաբնակութեան մէջ զարգացած չէ: Նա կապուած է երկրագործութեան հետ: Հալ ազգաբնակութիւնը չէ պահում աւելի մեծ քանակութեամբ անասուն, քան որ-քան հարկաւոր է երկրագործական պահանջներին մինիմալ կերպով բաւականութիւն տալու համար: Նրա ամենաանշան մասը միայն ունի մեծ քանակութեամբ տաւար, ոչխար, ալծ ու խոզ: Տաւարը նիհար է, հասակով ցած և վատով: Մի քանի հալ գիւղեր միայն — Տումի, Թաղոտ, Աւետարանոց և Շոշի — պարապում են անասնապահութեամբ: սակայն ակտեղ էլ վերջինս երկրագործութեան չափ զարգացած չէ: իսկ մնացած գիւղերում աւելի բաճախ պատահում են ծխեր, որոնք տաւար բոլորովին չունին, ինչու և երկրագործութեամբ չեն պարապում: Տաւարն արածում է արօտատեղերում և ցլած արտերում: Արօտատեղերը ըստ մեծի մասին գտնւում են թւորք ելլաղլիների ձեռքին, որոնք զարնանը չւում են տափարակներից լեռները:

Պ. Ա. Բալանթարի աշխատութիւնից *) տեսնում ենք, որ տաւարի քաշը 5—7—8 փութ է: Կովը տալիս է օրական 8—15 ֆունտ կաթ—մալխին և լունխին: Ամբողջ տարուալ համար, միջին թուով, կովը տալիս է ոչ աւելի քան 9.5 ֆունտ:

Շուշու գաւառում թուրք ազգաբնակութեան մէջ անասնապահութիւնը բռնում է գերադաս տեղ՝ համեմատելով գիւղատնտեսական միւս ճիւղերի հետ: Գարնան սկզբներին գաւառի թուրքերը թողնելով իրենց բնակութեան վայրերը, չւում են լեռները, որտեղ անասնապահութեան վերաբերեալ բոլոր գործերը կատարում են կանաք: Տղամարդիկ մասամբ մնում են տափարակներում՝ իրենց վար ու ցանքին նախելու և հունձը հաւաքելու: Գարնան և ամառը ստացած արդիւնքներից թուրքերը վաճառ են հանում մի մասը: Բուրդը, իւղը և պանիրը նրանք ծախում են հալերին, փոխանակում են ցորենով և ալլն:

Կովից ստանում են օրական 8—15 ֆունտ կաթ—մալխին և լունխին՝ լետոյ 4—6 ֆունտ: Կարելի է ասել, թուրքերի կովը տալիս է 8.25 ֆ. կաթ, միջին թուով: Գտնելով առաջին և վերջին թուերի (9.5 և 8.25) միջինը, ստանում ենք մօտ 8.9 ֆունտ: ալլքան, ուրեմն, կաթ է ստացւում մի կովից պ. Ա. Բալանթարի տեղեկութիւնների համաձայն:

*) А. Калантаръ. Скотоводство на Кавказѣ.

Ներքև դնում եմ 1891 և 1895 թուերում գալառի ունեցած անասունների աղիւսակը:

Աղիւսակ 1.

Անասուններ	1891 թ.			1895 թ.		
	Քա- ղաք	Գալառ	Բոլորը	Քա- ղաք	Գալառ	Բոլորը
Ձի	210	6,212	6,422	370	12,600	12,970
Էշ	85	13,000	13,085	320	13,200	13,520
Ջորի	145	800	945	160	840	1,000
Եզ-կով	550	59,161	59,711	580	64,400	64,980
Գոմէշ-մատակ	—	10,000	10,000	—	11,200	11,200
Ոչխար (հաս.)	650	139,221	139,871	220	155,000	155,200
Այծ	66	5,644	5,710	380	8,200	8,580
Խոզ	—	12,880	12,880	60	22,000	22,060
Ուղտ	—	219	219	—	256	256

Խոզապահութեամբ պարապում են միայն հալերը: Իսկ ուղտերը պատկանում են թուրքերին:

Բացարձակ թուերից էլ 'երևում է, որ 1891 թուից մինչև 1895-ը անասուններն ընդհանրապէս՝ բազմացել են: Այժմ տեսնենք ինչպէս է արտապատում աղ դարգացումը գալառի աղգաբնակութեան թուի վերաբերմամբ: Վերցնում է միայն գալառը:

Աղիւսակ 2. *)

Անասուններ			Երեքի մօտ. թիւը		Բնակիչն. մ. թիւը		Մի ծխին գալիս է		Մի հոգուն գալիս է	
	1891	1895	1891	1895	1891	1895	1891	1895	1891	1895
Ձի	13,716	20,250	18,157	18,778	108,942	112,668	0,75	1,07	0,125	0,179
Եզ-կով	79,161	86,800					4,38	4,56	0,75	0,79
Ոչխար	143,926	161,835					7,9	8,6	1,32	1,43
Խոզ	12,880	22,000					1,22	2,02	0,2	0,37

*) Երկրորդ աղիւսակի մէջ բոլոր ջորիներն ու էշերը դարձրած են

Վերը բերած թուերից երևում է, որ իւրաքանչիւր ծխին 1891 թուին ընկնում է ձի 0,75. ասել է թէ՝ այդ թուին գաւառում կա-
զին ծխեր, որոնք ամենևին ձի չունէին: Եթէ թուերն էլ չլինէին,
այդ կարելի էր ասել համարձակ կերպով գոնէ հալերի համար: Նոյն
քանը կարելի է ասել 95 թուի մասին. կոտորակն անել է մինչև
մի ամբողջ և աւելի:

Այսպէս թէ այնպէս՝ թուերը ցոյց են տալիս գաւառի վերա-
ցական բարեկեցութիւնը, միջին հարստութիւնը, բայց իրողութիւնը:
Եթէ լինէին թուեր տնտեսական դրութեան մասին, որոնք ցոյց են
տալիս ձի, եղ, ոչխար և այլն չունեցող ծխերի քանակութիւնը,
մենք պիտի տեսնէինք, որ այդպիսիները կազմում են նշանաւոր կոն-
տինգէնտ: Յետոյ այդ չորս տարուայ ընթացքում կրկնապատկուել է
գաւառի ձիերի թիւը: Այդ կրկնապատկումը բացատրել ձիերի աճ-
մամբ չէ կարելի. ընթերցողը կարող է ենթադրել, թէ ազգաբնա-
կութիւնը վերը չիշած ժամանակի ընթացքում հարստացել է որոշ
չափով, բայց գուցէ այդ երևոյթը հետևանք է գիւղական ունևոր
դասակարգի հարստութեան զարգացման և ոչ գաւառի ժողովրդի
ընդհանրապէս, որն աւելի հաւանական է:

Ինչ վերաբերում է խոզերին, վերջիններս պատկանում են հա-
ջերին, որովհետև թուրք ազգաբնակչութիւնը խոզապահութեամբ չէ
պարապում. ուստի 2-րդ աղիւսակի վերջին չորս սիւնեակների
թուերը վերաբերում են միայն հալերին:

1891 թուից մինչև 1895 թիւը՝ իւրաքանչիւր տարի մի հազար
մարդու վրայ, գաւառում, աւելացել է մօտ 37 հոգի, իւրաքանչիւր
հազար ձիի վրայ 102 հատ, հազար ոչխարի վրայ 102 հատ, հազար
եղ-կովի վրայ 125 հատ *): Թէև այս թուերից գաւառի համար օրէնք
հանել չէ կարելի, բայց նրանք գոնէ ցոյց են տալիս, որ անասուն-
ներն այդ չորս տարուայ ընթացքում անել են աւելի արագ քան
մարդիկ:

Համեմատութեան համար մենք աչտեղ դնում ենք Ռուսաս-
տանի մի քանի նահանգների **) վերաբերեալ թուեր, որոնցից ըն-
թերցողը կը տեսնի որ այդ նահանգներում իւրաքանչիւր ծուխն ա-
ւելի քիչ տաւար և այլ անասուններ ունի, քան մեր գաւառում:

ձիեր, գոմէշներն ու մատակները—կովեր, ուղտերն ու այծերը—ոչխարներ,
հաշուելով մի ձին հաւասար 2 էջի և $\frac{1}{3}$ ջորու, մի կովը կամ եղը— $\frac{1}{2}$ գոմէշի
կամ մատակի, իսկ մի այծը $\frac{5}{6}$ ոչխարի:

*) Հազար խոզի վրայ աւելացել է 115 հատ:

**) Այդ թուերը վերաբերում են Նավարաստիայի, Մալարաստիայի և
Չերնադեովի մի քանի նահանգներին: Յետ „Нов. Время“, №№ 7312, 14, 17 և 20.

Աղյուսակ 3.

Անասուններ	Մի ժխին գալիս է ուս. նահանգ.		Մի ժխին գալիս է Շուշու գաւառ.	
	1862	1893	1891	1895
Զի. . . .	2,06	0,59	0,75	1,07
Տաւար. .	2,47	0,84	4,38	4,16
Ուլխար. .	7,87	2,02	7,9	8,6
Խող. . . .	1,66	0,37	—	—

1895 թուին գաւառում ստացուած է բոլոր 10,230 փութ, որից ծախել են 8,300 փ.—3 բ. 20 կոպէկով փութը, ընդամենը 26,560 բութը:

IV. ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Շերամապահութիւնը մեր գաւառում վաղուց տարածուած է. Դաւառի բոժոժը մի ժամանակ եղել է խալական դեղին տեսակից: Շերամապահ գիւղացին իւր տանը ոտնաչարխով պատրաստում է եղել թել, որը գնել են տեղական վաճառականները և արտահանել արտասահմանեան քաղաքները:

Նոթանասնական թուականներին գալիս են մեր գաւառը ֆրանսիացիներ, որոնք մեծ քանակութեամբ սերմ են հանում տեղական բոժոժից, իսկ արտասահմանեան հիւանդոտ սերմը բերում են տարածում գաւառում: Այդպիսով հիւանդանում է սերմի գործադրող տեսակը և տեղի է տալիս ուրիշ տեսակներին: Սակայն այդ թուականներին տեղական (շուշու) վաճառականները արտասահմանից օրինակում են մանարանը և մետաքս ոլորող մեքենան և աշուհներ սրանց բոլոր ջանքը լինում է բերել առողջ սերմ Յելլիւսի եղանակով պատրաստած: Այդպիսով շերամապահութիւնը կրկին առաջ է գնում: Այժմ գիւղացին սերմ ստանում է կամ գործարանատէրերից կամ ուրիշ մարդկանցից, որոնք չըջում են գիւղերը և սերմ բաժանում որոշ պալմաններով:

1890 թուին գաւառում ստացուած է բոժոժ 2,138 փութ, 1893-ին 4,300 փ., 1894-ին 17,000 փ. և 1895-ին 9 000 փութ:

1895 թուին, զաւառապետի տեղեկութիւններէ համաձայն, 4,300 փութ բոժոժ ուղարկուած է արտասահման:

V. ՄԵՂՈՒԱՐՈՒԾՈՒԹԻՒՆ

Գաւառում մեղուապահութեամբ պարապում են քչերը միայն, և ստացած մեղրը գիւղացին մեծ մասով գործադրում է տանը, ժողովուրդը մեղու պահել չգիտէ, այնպէս որ չաճախ փեթակները լըցւում են որդներով, որոնք ոչնչացնում են մեղուներին: Այդ է պատճառը, որ գիւղացիների մէջ մեղուաբուծութիւնը տարածուած չէ:

Նս ունիմ թուեր՝ ստացուած մեղրի և մոմի քանակութեան մասին՝ միայն 1895 թուի համար, որ և բերում եմ.

Մեղուապահութեամբ պարապող թիւը	Փեթակների թիւը	Ստացուած է	Ստացուած է	1000 թիւին զայն է մեղուապահ թիւեր	Մի փեթակից ստացուել է մեղր և մոմ
		Փութ	Փութ		
46	283	75,6	9,8	2,44	0,3

VI. ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Վարանդաբում մեծ լճեր և գետեր չլինելու պատճառով չատկապէս ձկնորսութեամբ պարապողներ չկան: Միայն սիրողները, այն էլ ազատ ժամանակներում, որսում են մի քանի տեսակ ձկներ, որ գլխաւորապէս իրենք են գործածում և կամ շատ քիչ դէպքերում վաճառի հանում: Բացի սովորական ուռվանից (թուռ), գործ են ածում և՛ ճվարան: Սա կոնաձև հիւտուած մի կողով է, մէջը մըտցրած մի երկրորդը, որ աւելի փոքր է և երկու ծալրից էլ բաց: Մեծի մէջ թափում են հացի փշրանքներ և առհասարակ ախպիսի բաներ, որոնք կարող են դրաւել ձկներին:

Ճվարանը տեղաւորում են մի ախպիսի անկիւն, ուր ջուրը թափում է աննշան բարձրութիւնից: Ձկները մտնում են ճվարանի:

մէջ և երբ վերջինս հանում են, նրանք մէջն են մնում: Ձուկ որսում են նաև ջրի ընթացքը փոխելով:

VII. ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ


Որսորդութեամբ սլարապւում են նոյնպէս սիրողները, գործածելով առաւելապէս ամբողջ կովկասում գործածական հին ձևի զէնքերը: Սպանած որսը սովորաբար իրենք են գործածում և կամ ծա-

խում մեծ մասամբ իրենց գիւղերում: Առաւելապէս Աւետարանոց, Թաղլար, Թաղավարդ և այլ գիւղերի բնակիչները իրենց շըրջակայ անտառներում որսում են եղջերու, ալծեամ (*բօշ*), արջ, գալլ, վալրի կատու, չաղալ և այլն:

Առհասարակ խմբով են գնում որսի և Թռչուն որսալու համար տանում են իրենց հետ «դամլա», որ քառանկիւնի մի շրջանակի վըրայ կպցրած գոյնզգոյն կտոր է: Սրա վրայ կան երեք ծակ, երկուսը որսորդի աչքերի, իսկ երրորդը հրացանի հա-

Ձ է ն ք ե ր

մար: Թռչնորսը դամլան ձեռին բռնած առաջ է գնում, ծածկուելով նրա ետևում:



Թռչուններին «ծղարակով» էլ են որսում:—Այգու մէջ կամ մի որևէ չարմար տեղ մի փոս են փորում և բերանը ծածկում երկու բարակ տախտակով՝ փեղկերի նման: Սրանք լենում են չիլփինների վրայ:—Թարմ ու ճկուն ոստիկներ, որոնք թռտով չորս են, իւրաքանչիւր փեղկի համար երկուսը և կատարում են զսպանակի դեր: Նրա թռչունը կանգնում է տախտակների վրայ, չիլփինները՝ նրա ծանրութիւնից կռանում են, փեղկերը բացւում են փոսի մէջ և նա ընկնում է ծղարակը: Գրանից լետոյ չիլփինները կրկին ուղղւում են, փոսը ծածկւում է և թռչունը մնում փակուած:



Շուշու ջուկիր.

Բ) ԱՐՀԵՍՏՆԵՐ

Արհեստները մեր գաւառում բաւական տարածուած են և նըրանցով պարապւում են բացառապէս հայերը: Ի հարկէ խօսքս գիւղերի մասին է և ոչ քաղաքի, ուր թուրքերն էլ պարապւում են արհեստներով, բայց շատ սահմանափակ կերպով: Ամենից աւելի տարածուած արհեստները քարտաշութիւնը, որմնաղորութիւնը և հիւանութիւնն են: Չնայելով արհեստաւորների թուի մեծութեան, նրանցից միաջն քչերը մնում են գաւառում, իսկ մեծ մասը պանդխտում

է զանազան կենդրոններ աշխատանք գտնելու համար: Դրանք պանդխտութեամբ են լսուած կարճ ժամանակով և լատով վերադառնում, մնում են տանը որոշ ժամանակ և դարձեալ գնում են: Ինչ վերաբերում է զաւառութեամբ մնացող արհեստավորներին, նրանք մեծ մասով երկրագործներ էլ են, Դրանք բոլորն ստանում են գործադէպից կերակուրը, իսկ գործատէրը աշխատութիւնների մէջ ակտիւ մասնակցութիւն է ունենում: Կան և ալեպիսի արհեստավորներ, որոնք մի քանի արհեստ գիտեն:

Արհեստավորների բանուորական օրն սկսւում է գիւղում վաղ առաւօտից և տևում է մինչև երեկոյեան վերջալուսը՝ մի ժամի չափ դադար ունենալով:

Վարպետը զաւառութեամբ իւր աշակերտի տէրն է: Գործ մանելու օրից՝ աշակերտը իւր տան համար գրեթէ չպիտի աշխատի. նա՝ մինչև քարգահ դառնալը՝ բացի վարպետի հետ աշխատելուց, արհեստին վերաբերեալ գործերը կատարելուց, ծառայում է և՛ նրա տանը:

Արհեստավորի բանուորական օրը քաղաքում սկսւում է գրեթէ ժամը 5-ից և տևում է մինչև 6 կամ եօթը: Կան արհեստավորներ, որոնք աւելի շուտ են վերջացնում օրուայ աշխատութիւնները: Դա՝ դարը լինում է միալն կէսօրին, ճաշի համար և տևում է՝ ալեքան ժամանակ, որքան հարկաւոր է ճաշելու համար:

Ներքև ես գնում եմ զաւառի ալն արհեստավորներին, որոնք պարապում են միալն իրենց արհեստով, ապա պիտի լինեմ նրանց, որոնք զբաղւում են իրենց արհեստով միալն ձմեռը:

I.

1. Դերձակներ. սրանք կատարում են ոչ միալն մի գիւղի պատուէրները, ալ և շրջակայ հայ և թուրք գիւղերինը:

2. Հիւսնեք—նոյնպէս:

3. Դարբիններ—ձմեռը գնում են թուրք գիւղերը և ալնտեղ աշխատում:

4. Պայտառներ, որոնք աշխատում են որևէ գիւղում և շրջակայ թուրք գիւղացիների համար: Պալտառները չորեքշաբթի օրերն աշխատում են մալականների շուկայում: Նրանք պալտերն ստանում են Շուշուց:

5. Տակառագործներ:

6. Ումնագիրներ:

7. Նրաժիշտներ—բոլոր գիւղերում երաժիշտներ չկան. եթէ

որն է գիւղ ունի երաժիշտներ, շրջակայ թուրք և հայ գիւղերն էլ հրաւիրում են նրանց:

8. Անասնաբույժներ:

9. Մսագործներ:

II.

Դերձակներ, կլէկչիներ, դարբիններ և տակառագործներ, որոնք ուրիշ արհեստներ էլ ունին, Սափրիչներ. Թաղարում կալ մի սափրիչ, որը և՛ որմնադիր է, և՛ հիւան, և՛ ձէթ պատրաստող, և՛ օղէգործարանատէր:

Նոյն գիւղում կալ մի համեսագործ և մի դերձակ, որոնք աշխատում են պատուիրատուի տանը՝ գործադրելով նրա մատերիալը:

Արհեստաւորների աշակերտներ.—Բոլոր աշակերտները մինչև քարգահ դառնալը՝ ստանում են իրենց վարպետներից հագուստ և կերակուր, իսկ վարձ չեն ստանում:

1. Դերձակի աշակերտը երկու տարի վարձ չէ ստանում, լետոյ իբրև քարգահ ստանում է 25—50 բ. տարեվարձ:

2. Դարբնի աշակերտը երկու և կէս կամ երեք տարի սովորում է. դարբնի քարգահն ստանում է եղած արդիւնքի $\frac{1}{4}$ ը:

3. Կլէկչու (կլալեկոյ) աշակերտը սովորում է արհեստը 6 ամսում, դրանից լետոյ, եթէ ընկերանում է վարպետի հետ, ստանում է արդիւնքի $\frac{1}{3}$ ը: Կլէկչիները գիւղերում իրենց վարձն ստանում են արմտիքով:

4. Տակառագործի աշակերտը սովորում է արհեստը $2\frac{1}{3}$ կամ 3 տարուալ ընթացքում. լետոյ իբրև քարգահ՝ ստանում է 40—50 բուբլ տարեվարձ:

ԿԻՆ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐ

1. Հացթուխ.—Բացառապէս հացթխութեամբ պարապուող կանաչք դաւառում շատ քիչ են, որովհետև իւրաքանչիւր տանտիկին գիտէ հոնցել և թխել: Երեք պատ հաց թխելուց լետոյ—մի ժամում նա ստանում է 3 հատ բոռոյ:

2. Բուրդ գողոյ } ստանում են 10 կոպ. օրավարձ:

3. Թել մանող }

4. Կապերտ գործող. Կինը մի կազ երկարութեան և երկու կազ լայնութեան կապերտ գործելուց լետոյ ստանում է 2 բ. 50 կ. —3 բուբլի: Գործը տեւում է մօտ մի ամիս: Օրավարձ կապերտ գործողն ստանում է 10—20 կոպ.: Պէտք է ասել, որ Շուշու դաւառում բաւական դարգացած է գորդագործութիւնը, քէն առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կապերտ, ձիու չուլ և այլն:

1895 թուի դաւառի տարնտաւոր վարպետների, աշակերտների և բանուորների թիւը ցոյց է տալիս ներքե գետեղածս աղիւսակը:

ԱՐԿԵՏՈՒՄԱՆ ԵՐԵՐ	Շուշի քաղաք			Շուշու գաւառ		
	Վարպետ	Բանուոր	Աշակերտ	Վարպետ	Բանուոր	Աշակերտ
Հացթուխ	13	9	3	6	4	—
Կանդիտեր	4	3	5	—	—	—
Մազործ	12	11	—	9	—	—
Դերձակ	80	29	62	12	—	7
Կին դերձակ	1	1	—	—	—	—
Դլխարկ կարող	24	4	20	3	—	1
Կօշկակար և մաշկակար	85	2	60	3	—	2
Դարբին	18	—	5	10	—	—
Պողպատագործ	15	5	9	—	—	—
Պղնձագործ	3	2	1	—	—	—
Զինագործ	1	—	1	—	—	—
Վառարանագործ	3	1	—	—	—	—
Թիթեղագործ	11	3	6	—	—	—
Պաշտառ	12	—	—	9	—	—
Դանակ սրող	4	—	4	—	—	—
Կլաշնկող	9	—	3	2	1	2
Հիւսնէր	12	6	9	1	—	1
Ատաղձագործ	10	3	7	7	—	—
Ապակեգործ	3	—	—	1	—	—
Կառք շինող	1	—	1	1	—	1
Բարտաշ	13	—	6	8	—	—
Ժամագործ	4	—	4	—	—	—
Սափրիչ	34	8	29	2	2	—
Ներկարար (պոլանճի)	10	2	8	—	—	—
Ներկարար	2	—	—	—	—	—
Կաշեգործ	7	—	2	—	—	—
Թամբագործ	4	—	4	—	—	—
Սառած	16	8	—	—	—	—
Թաղիքագործ	4	1	2	—	—	—
Անասնաբույժ	2	—	—	3	—	—
Սափրիչ	15	—	9	19	—	4
Լուսանկարիչ	2	—	—	—	—	—
Տպարանատէր	2	—	10	—	—	—
Կառապան	—	—	—	15	—	—
Սապնագործ	6	2	3	—	—	—
Ընդամենը	440	120	273	111	7	18

Հազար հոգու վրայ քաղաքում գալիս է 22 արհեստավոր, իսկ գաւառում 1,27: Փաղաքում և գաւառում հազար հոգու վրայ գալիս է 8,6 արհեստավոր: Քաղաքում և գաւառում եղած արհեստավորների թուի 17,75% կազմում են կօշկակարները, ղերձակները 19,6%, սափրիչ 7,74%: Յետու գալիս են զլխարկ կարողները, դարբինները, հիւանները, սառածները, քարտաշները և այլն:

Այս աղիւսակն առանց թերութիւնների չէ: Կան արհեստավորներ, որոնց թիւը շատ պակաս է քան թէ ալդ պիտի լինի, օր. քարտաշները, հիւանները և այլն:

Գ) ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱՐԵՐՈՒԹԻՒՆ

Արդիւնաբերութեան ալս տեսակը մեր գաւառում օրըստօրէ տօնում, զարգացում է. 1893 թուի տեղեկութիւնների համաձայն, Նահանգի գինու և օղու գործարանների $\frac{1}{2}$ -ը զետեղւած է Շուշու գաւառում: 1895 թուի պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, գաւառում ալդ տարի եղել են հետեւալ գործարանները:

Գործարանների տեսակը	Շուշի քաղաք			Շուշու գաւառ		
	Գործարանների թիւը	Արդիւնաբերութեան արժէքը	Բանուորների թիւը	Գործարանների թիւը	Արդիւնաբերութեան արժէքը	Բանուորների թիւը
Մետաքս մանող	1	14,000	80	12	210,000	720
Մետաքս ոլորող	1	13,000	90	4	87,500	310
Գինու և օղու .	—	—	—	7	360,000	500
Կաշու	6	2,500	9	—	—	—
Օճառի	4	2,300	6	—	—	—
Պոլսանու	10	3,200	17	—	—	—
Աղիւսի	2	1,200	6	—	—	—
Բոլորը . .	24	36,200	209	23	657,500	1530

Ինչպէս տեսնում ենք, ըստ արդիւնաբերած արժողութեան գործարանների մէջ առաջին տեղը բռնում են մետաքսի, օդու և գինու գործարանները: Ինչ վերաբերում է գինու և օդու գործարաններին, սրանցից եօթը կատարելագործուած են, իսկ մօտ 1000 անդակաւ ձեռք են:

Ըստ պաշտօնական տեղեկութիւնների՝ 95 թուին գումարում եղել են 18 մետաքսի գործարաններ, իսկ ալս տարի, մի ֆաբրիկանտի տակով, ամբողջ գումարում կալ 26 գործարան, որոնցից 16 մանարան և 10 մետաքս ոլորող: Անկարելի է ենթադրել, որ մի տարուալ ընթացքում գործարաններն ավելացել են 8-ով: Հաւանականաբար պաշտօնական տեղեկութիւնը անսխալ չէ...

1895 թուին պատրաստուած է 1100 փութ մետաքս և 280 փութ ֆրիզոն:

Մինչև 1883 թուականը գումարում պատրաստուած թելն ուղարկում էր Մարսէլ, բայց այդ թուից լետու և մինչև այժմ մետաքսի թելն ուղարկում է Մոսկուա, իսկ ֆրիզոնը Ֆրանսիա:

Բանուորները մետաքսի գործարաններում երկու սեռի են: Դրանց մէջ փոքրահասակ երեխաները աւելի շատ են, որովհետև ֆաբրիկաներին ձեռնառու է ունենալ շուտ սովորող և անշաւ վարձ ստացող բանուորներ: Մի քանի տարի առաջ՝ այժման աղջիկ բանուորների տեղը բռնում էին տղաներ, բայց ֆաբրիկաները վերջիններին ալ ևս չեն պահում, որովհետև աղջիկները թէ մաքուր աշխատող են և թէ կարգերին անպայման հնազանդուող, — իրենց խօսքով — սլտող են:

Բանուորների օրավարձը 7—40 կոպէկ է. մինիմալ վարձն ստանում են ալս բանուոր երեխաները, որոնք հաւաքում են գործարանում թափուած որդերը և դուրս են հանում:

Բանուորական վարձերի աղիւսակ (գաւառի համար):

Ա տ ր ի ճ ա ն ն ե ռ	Ամսական բանուորներ					Օրական բանուորներ									
	Երեւոյ համար	Հատուկ	Դրամ	Փութ	Եւրո	Հինգ	Պարսկական	Երեւոյ համար	Հատուկ	Դրամ	Փութ	Եւրո	Հինգ	Պարսկական	Երեւոյ համար
Minimum .	7	1	5	6	—	45	15	10	30	40	30	7	—	—	10
Maximum .	10	4	8	7	6	90	20	20	40	60	50	40	10	10	20

*) Մետաքսի գործարաններում աշխատող բանուորները միայն:

Աշխատանքը մետաքսի գործարաններում սկսւում է առաւօտեան ժամը 6-ից և տևում է մինչև 8-ը—ամառը, իսկ ձմեռը 6-ից մինչև 6-ը մանարան գործարաններում: Ուրոող գործարաններում բանուորները թէ ձմեռ և թէ ամառ աշխատում են 6-ից մինչև երեկոյեան 8-ը: Դադարը լինում է կէս օրին, որը տևում է մօտ մի ժամ: Ուրեմն աշխատանքը տևում է 11—13 ժամ: Չսկսք է մոռանալ, որ գործարաններում աշխատող բանուորների, մանաւանդ կին բանուորների, մեծ մասը կադմում են 8—12 տարեկան երեխաներ:

Բոլոր գործարաններում գաւառում և քաղաքում աշխատել են 1895 թուին 1739 բանուոր, որոնցից մեծ մասն ընկնում է մետաքսի, գինու և օղու գործարաններին, ուրեմն բանուորների մեծ մասը—գաւառումն են:

Պէտք է ասել, որ գործարանի շուրջը գտնուած դիւղերից էլ (մօտիկ, ի հարկէ) բանուորներ են գալիս:

Հազար հոգու վրայ քաղաքում և գաւառում գալիս են 11,9 գործարանական բանուոր, գաւառում միայն հազարի վրայ գալիս են 13.3, քաղաքում միայն—6.2: Հազար հալ բնակչի վրայ միայն գաւառում գալիս են 23.4 գործարանական բանուոր:

Ա Ռ Ե Ի Տ ՈՒ Ր Ը Գ Ա Ի Ա Ռ ՈՒ Մ

Ժողովրդի աննշան մասը միայն պարապւում է առևտրով: Վերջինս ոչնչով չէ տարբերւում հասարակ մանրավաճառութիւնից: Գիւղերում պատահում են խանութպաններ, որոնք՝ գիւղական ժողովրդի պահանջների համեմատ՝ պահում են զանազան տեսակի ապրանքներ: Գիւղացիք իրենց հարկաւոր առարկաները գնում են նույնպէս քաղաքում և ավելի լաճախ՝ շուկաներից, որոնք երկու են ամբողջ գաւառում: Այդ շուկաներում շաբթուաւ որոշ օրերին վաճառ են հանում հացահատիկներ, կերպասներ, մրգեր և ալլն, և անշուշտ մեծ փող է շրջում ալդտեղ:

Գաւառը ներքերում են ցորեն և ալլ հացահատիկներ, աղ, նաւթ, պտուղներ և ալլն: Հացահատիկները, բացի բրինձից, աղը, նաւթը և պտուղները վաճառւում են փողով, իսկ մնացած իրերը փոխանակւում են ցորենով, գարիով և կորեկով: Օր. գիւղացին տալիս է երկու քաշ ցորեն և ստանում է մի քաշ բրինձ, կամ մի քաշ խաղողի համար տալիս է 2 քաշ գարի կամ 3 քաշ կորեկ:

Գաւառից քաղաք արտահանում են ցորեն, ալիւր, գարի, գինի, պտուղներ և ալլն, իսկ տնայնագործական հիւսուածներից՝ գորգ և

կապերու Գորգերը գիւղերումն էլ վաճառում են զորդ հաւաքողները: Հաջ ժողովուրդը իւղի, պանրի և բրդի հարկաւոր քանակութիւնը ձեռք է բերում թուրքերից: Աւետարանոցում և նրա շրջակայ գիւղերում բնակիչները տալիս են սար չւող թուրքերին ցորեն, գարի, որոշելով դրանց գինը և պալմանաւորւում նրանց հետ—ստանալ տուածի փոխարէն բուրդ, իւղ և պանիր, որոնք նույնպէս կանխօրէն գնահատւում են:

ՔԱՂԱՔԻ ԲԻՒԴԺԷՆ

1895 թուին քաղաքն ունեցել է եկամուտ 39,296 ռուբլ 82 կոպէկ, ծախք՝ 33,956 ռ. 90 կ., դրամագլուխ՝ 33,887 ռ. 44 կոպ.

Եկամուտը կազմում են 14% տուրքը քաղաքի անշարժ կալքերից և ընտանեկան դպրոցի պաշտպանութեան համար ստացուած 7,500 ռուբլը:

1885 թուին քաղաքն ունեցել է մուտք 29,512 ռ.

Ծախք 25,316 »

Դրամագլուխ 19,002 »

Չվճարուած տուրքի փող 26,639 »

Ղ. Տէր-Ղազարեան

